Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
մայիսի 25-ի N 276 -Ա
որոշման

«ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ներկայացվող ծրագրի նպատակն է նպաստի համակարգում ընդգրկված և ՍԱՏԲ-ում հաշվառված միակողմանի ու երկկողմանի ծնողազուրկ և (կամ) բազմազավակ ընտանիքների շուրջ 320 երեխաներին տրամադրել տեխնիկական սարքեր COVID-19 համավարակով պայմանավորված հեռավար կրթության պայմաններում նրանց կրթության հիմնարար իրավունքի իրացման համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«ԻՄ ՔԱՅԼԸ» բարեգործական հիմնադրամը, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներով
4.	Ծրագիրը կատարողը	«ԻՄ ՔԱՅԼԸ» բարեգործական հիմնադրամ 0010 Երևան, Տերյան 1/1 ՀՎՀՀ՝ 01282864
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության մարզեր, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն է 23,173,334 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	Խոցելի ընտանիքների 320 դպրոցահասակ երեխաներ, որոնց ցանկը կտրամադրի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Թիրախային կատեգորիայի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ հեռավար կրթության պայմաններում ամենից խոցելի կարգավիճակում են սոցիալապես անապահով ծնողազուրկ և բազմազավակ ընտանիքների դպրոցականները, որոնք տեխնիկայի բացակայության պայմաններում դուրս են մնում կրթությունց:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թվականի մայիսի 8-ից մինչև 2020 թվականի մայիսի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակում նախատեսվում է՝ • 27.04.2020 - 04.05.2020 շահառուների ցանկի հարցում, ճշգրտում և հաստատում ԿԳՄՍ նախարարության և մարզպետարանների հետ (ֆինանսական միջոցներ չեն պահանջվում), • 08.05.2020 - 13.05.2020 շուկայի ուսումնասիրություն և տեխնիկական սարքերի ձեռքբերում՝ ըստ ԿԳՄՍ նախարարության սահմանած չափորոշիչների (23,173,334 դրամ), • 08.05.2020 - 30.05.2020 բաշխման պլանավորում և իրականացում (ֆինանսական միջոցներ չեն պահանջվում):
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել 320 պլանշետ հետևյալ տեխնիկական պարամետրերով. HUAWEI MEDIAPAD T3 8 KOB-L09 (GR) Էկրանի Չափս: 8 Էկրանի Տեսակ: IPS Կետայնություն: 800x1280

		OS: Android 7.0 (Nougat) CPU: Q.C. Snapdragon 425 Հաճախականություն (ԳՀց): 1.4 GPU: Adreno 308 Օպերատիվ Հիշ. (ԳԲ): 2 Ներ.հիշող./Լրացուցիչ (ԳԲ): 16-up to 128 Կապ: 3G-4G Wi-Fi/Bluetooth: +-+ Տեսախցիկ (MP): 2-5 SIM: Nano Մարտկոց: 4800 mA-h Քաշ (գ): 350 Մեկ միավորի արժեքը 72,416.67 դրամ է
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի ուղղակի շահառուներին սահմանելու հարցում Հիմնադրամը համագործակցում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության և մարզպետարանների հետ: Սարքերի բաշխումն իրականացվելու է ՍԱՏԲ-ների և Հայկական կարմիր խաչի ընկերության հետ համագործակցությամբ: Հայկական կարմիր խաչի ընկերության ներգրավումը պայմանավորված է վերջինիս մասնագիտական բազմամյա փորձով, հատուկ վերապատրաստում անցած կամավորների մեծ ցանցով և մարզային ներկայացվածությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Տրամադրված պլանշետների նպատակային օգտագործման և շահառուների՝ հեռավար կրթության մեջ ներգրավվածության մշտադիտարկումն իրականացնելու է ԿԳՄՍ նախարարությունը, ինչպես նաև Հայաստանի

		Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու եւ գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ